2023-2025

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆԾՐԱԳՐԻ

ԵՎ 2023

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. Զարգացման միտումները նախորդող միջնաժամկետ հատվածում

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գործունեությունն ուղղված է Վայոց ձորի մարզում կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսության և զբաղվածության բարձր մակարդակի ապահովմանը, ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարմանը:

Վայոց ձորի մարզպետարանը ապահովում է ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացումը Վայոց ձորի մարզում, համակարգում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Նշված նպատակների իրագործումը ապահովելու նպատակով ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով վերապահված լիազորությունների շրջանակում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը իրականցնում է կրթության, առողջապահության, մշակույթի ոլորտներում գործող ենթակա կազմակերպությունների կառավարման, կրթության, մշակույթի, սպորտի, քաղաքաշինության, ճանապարհաշինության և այլ ոլորտներում պետական պատվերի տեղաբաշխման, սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներում միջոցառումների համակարգման ծառայություններ:

Մարզի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է, որտեղից միջին հաշվով տարեկան արտադրվում է 23-25 միլիարդ դրամի համախառն արտադրանք:

Աղյուսակում ներկայացված են 2021 թվականին մարզում կատարված ցանքերը և ստացված բերքը.

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	2021թ կատարված ցանքերը և ստացված բերքը	
		Ցանք /հա/	Բերք /տ/
1	Հացահատիկ և հատիկաընդեղեն	1569	1554
2	Բանջարեղեն	272	3442.5
3	Բոստան	50	348
4	Կարտոֆիլ	107	1204
5	Պտուղ, հատապտուղ	2138	7139
6	Խաղող	1200	4033.2
7	Կերային	1847	22971

Արտադրված 4033.2 տոննա խաղողից մթերվել է 3579.5 տոննա, որից 1896 տոննան՝ մարզի վերամշակողների կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում վարչության կողմից համակարգվել են անասնաբուժական ծառայությունների աշխատանքները: Մարզի անասնաբուժական ծառայությունների կողմից պետպատվերով նախատեսված բոլոր անասնաբուժական կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները իրականացվել են համաձայն պլան գրաֆիկի:

1. Ոռոգման սեզոնին «Եղեգնաձոր» ՋՕ-ի կողմից ջրտուքը կազմել է 11 453 000մ3, հասույթը կազմել է 125 000 000 դրամ,գանձվել է 122 350 000 դրամ, կամ 97.1%:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից անվճար տրամադրված 54.4լ բրամադիալոն թունանյութի միջոցով մարզի 9 բնակավայրերում 680 հեկտար վարակված վարելահողերի և բազմամյա տնկարկների վրա իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ:

Վարչության կողմից արձանագրվել է, որ վայրի գիշատիչ կենդանիների, մասնավորապես արջի կողմից Զառիթափ, Եղեգիս, Արենի, Գլաձոր համայնքների 112 գյուղացիական տնտեսությունների հասցվել 10 597 500 դրամի վնաս:

Երաշտի հետևանքով չի հնձվել 727 հա հացահատիկային մշակաբույսերի (գարի, ցորեն, հարճար) ցանքատարածություններ, վնասի չափը կազմել է 152 768 590 դրամ:

Կարկտահարության հետևանքով 2021 թվականին վնասվել է 250հա տարածք, որից 225 հա պտղատու այգի, 8.7 հա բանջար – բոստանային մշակաբույսեր և 16 հա գարնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններ: Վնասի չափը կազմել է 342 035 000 դրամ:

Կարկատահարության վնասները մեղմելու համար կառավարությունը մարզին հատկացրել է 60.8 մլն դրամ՝ 32 նոր հակակարկտային կայաններ տեղադրելու համար:

Բոլոր 32 կայաններ արդեն տեղադրված են:

Կառավարությունը 24.2 մլն դրամ է հատկացրել Գետափ-Եղեգնաձոր-Գլաձոր-Վերնաշեն ոռոգման ջրագծի վթարային 29 հենասյունեի վերանորոգման համար: Շինարարկան աշխատանքներն ընթացքի մեջ են և կավարտվեն 2022 թվականին:

Կազմակերպվել է «Արաքս» թռչնաֆաբրիկայի կողմից արցախյան պատերազմում զոհված, վիրավորված և անհետ կորած զինծառայողների և սոցիալապես անպահով ընտանիքներին բարեգործական հիմունքներով տրամադրված մեկ օրական ճտերի հասցեական բաշխումը (առաջին փուլ՝ 14 2009 ճուտ, երկրորդ փուլը 6000ճուտ):

Բանկերի կողմից գյուղացիական տնտեսություններին տրամադրված վարկերի ընդհանուր գումարը և շահառուների թիվը.

- Ֆարմ Կրեդիտ, Կամուրջ ՈՒՎԿ, Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկերի կողմից մարզի գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է **ընդամենը՝ 940 000 000 դրամ /545 շահառու/:**

2. Նպատակները և հիմնական թիրախները ՄԺԾԾ ժամանակահատվածում

ՀՀ Վայոց ձորի մարզի առկա իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները.

Նպատակ 1-ին՝ Մինչ 2025 թ., մարզում բարձր կրթամակարդակ ունեցողների թվի աճ և տնտեսական կայուն աճի ապահովում՝ որակյալ և արդյունավետ աշխատատեղերի ստեղծում,

- ոչ գյուղատնտեսական ոլորտում ավել քան 10%-ով
- Ակտիվ ձեռնարկությունների աճ 10%ով
- Միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մարդկանց թվի աճ 10%-ով
- 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը աճ 10%

Հիմնավորում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման ռազմավարության 1-ին նպատակը բոլոր մարզերում մրցունակության բարձրացումն է հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ:

Նպատակ 2-րդ՝ Մինչև 2025թ. ՝

- մարզի թույլ զարգացած (սահմանամերձ) բնակավայրերի տնտեսական, սոցիալական և տարածքային անհամաչափությունների նազեցում 20%-ով
- Երիտասարդրության երկարաժամկետ գործազրկություն կրճատում 5%- ով
- Աղքատությունկ կրճատում 2%-ով

Հիմնավորում

Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման ռազմավարության 1-ին և 2-րդ նպատակներ՝ տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա, բոլոր մարզերում մրցունակության բարձրացում՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ:

Նպատակ 3-րդ՝ Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և համայնքային դերակատարների ակտիվության բարձրացում և մասնակցություն տարածքային զարգացման քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում

- մինչ 2025 թ., մարզը կունենա 5 խոշորացված համայնք / 2017թ/ և 100%-ը կունենան նոր տեղական զարգացման ծրագրեր

- մարզային և համայնքային աշխատողների 30%-ը տարեկան կընդգրկվի վերապատրաստման ծրագրերում
- Մարզի քաղաքացիական հասարակության մասնակցությունը տարածքային զարգացման քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում կաճի 10 %-ով

Հիմնավորում՝ Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման ռազմավարության 3-րդ նպատակը տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
ՀՀ Վայոց ձորի մարզում պետական քաղաքականության իրականացման ապահովում	*1051 ՀՀ Վայոց ձորի տարածքային պետական կառավարում*	*ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում կատարված ներդրումների ծավալը մեկ շնչի հաշվով, հազար դրամ*	100,1	*2020*	*130*	*2025*	Կառավարության քաղաքականությունն ուղղված է մարզի համընդհանուր զարգացմանը, անհատի և քաղաքացու բարեկեցության ապահովմանը և բարելավմանը
		Տարվա ընթացում ստեղծված ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի թիվ, մարդ	1572	*2020*	*1700*	*2025*	
		1000 բնակչին ընկնող նոր ստեղծվող աշխատատեղերի թիվ, տոկոս	31.4	*2020*	*35*	*2025*	

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Վայոց ձորի մարզի զարգացման երեք առաջնահերթ գերակայություններն են.

Զբոսաշրջության զարգացում՝ /էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ, պատմամշակութային տուրիզմ նաև տուրիզմի նոր ձևեր լեռնագնացություն, հեծանվորդություն, էքստրեմալ տուրիզմ, առողջապահական տուրիզմ,

կրոնական, գինու/: Խթանել գյուղական բնակավայրերում տուրիզմի զարգացմանը՝ գյուղական տուրիզմ:

Վերամշակող արդյունաբերության զարգացում՝ Վայոց ձորի մարզում իրատեսական է վերամշակող արդյունաբերության զարգացումը, քանի որ առկա է անհրաժեշտ աշխատուժ և հումք/գյուղմթերք,բնական պաշարներ/: Այն կնպաստի զբաղվածության ընդլայնմանը, քաղաքների զարգացմանը, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թվաքանակի աճին, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացմանը:

Գյուղատնտեսության մեքենայացում, արդիականացում՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, օրգանիկ գյուղմթերքի արտադրություն, գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի խթանում՝ Վայոց ձորի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Սակայն ավանդական գյուղատնտեսությունը իր զարգացման հնացած մոդելով ի վիճակի չէ ապահովել համաչափ և մրցունակ զարգացում, ուստի անհրաժեշտ է խթանել նոր տեխնոլոգիաների, նոր տեխնիկայի օգտագործման հնարավորություններ: Մեծ ծավալ ունեն չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը: Հողերի որակի բարձացման համար անհրաժեշտ է կատարել հողերի մելիորացիա: Շեշտը պետք է դրվի օրգանիկ գյուղմթերքի արտադրություն, ցանքային տարածությունների, պտղի և հատապտղի տնկարկների ավելացման և ինտենսիվ մշակությամբ այգիների հիմնման վրա:

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1 Պարտադիր և հայեցողական ծախսերը

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը հանդիսանում են պարտադիր ծախսեր, քանի որ այն ամրագրված է ՀՀ սահմանդրության 160-րդ հոդվածով և այդ ծախսերը կատարվում են ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացման համար:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի տեխնիկական հագեցվածության բարելավում միջոցառման ծախսերը հանդիսանում են հայեցողական ծախսեր:

Պարտադիր և հայեցողական ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ստորև ներկայացված աղյուսակում.

Դասիչը	Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորություններ	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող

Ծրագիր	Միջոցառում		րի շրջանակը	հայեցողական իրավասություններ ի շրջանակները	օրենսդրական հիմքերը
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1051	11001	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում	ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում ՀՀ կառավարության կողմից տարածքային քաղաքականության իրականացում	Մարզպետարանի կառուցվածք և թվաքանակ	ՀՀ Սահմանադրություն, 160-րդ հոդված
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին, այդ թվում՝					

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխադասությամբ իրականացվում է 1051 «ՀՀ Վայոց ձորի մարզում տարածքային պետական կառավարում» ծրագիրը: Ծրագիրը նպաստում է ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում ՀՀ կառավարության կողմից տարածքային քաղաքականության իրականացման, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել երկու միջոցառում:

11001 «ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում» միջացառմանը 2022 թվականին կուղղվի 417271.7 հազար դրամ: Մարզպետարանի կառուցվածքում ներառվում են 13 կառուցվածքային ստորաբաժանումները, ունի 75 հաստիքային միավոր: Ստորև աղյուսակում ներկայացված է Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների թվաքանակը ըստ ոլորտների.

Ոլորտի անվանումը	**Կազմակերպությունների քանակը**				
	2021	**2022**	**2023**	**2024**	**2025**
Կրթություն	**45**	**45**	**45**	**45**	**45**
Առողջապահություն	**8**	**8**	**8**	**8**	**8**
Մշակույթ	**2**	**2**	**2**	**2**	**2**

Արտադպրոցական դաստիարակություն	**1**	**1**	**1**	**1**	**1**
Ընդամենը	**56**	**56**	**56**	**56**	**56**

4.3. Նոր նախաձեռնությունները

Նոր նախաձեռնություններ առկա չեն:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը 2023-2025թթ. ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտներ չունի:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին 2023-2025թթ. ընթացքում տրամադրվող բյուջետային ռեսուրսներն ամբողջությամբ ուղղվելու են Վայոց ձորի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

7. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

-

8. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը 2023-2025թթ. արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկեր և դրամաշնորհներ չունի:

9. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2023-2025թթ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրերին ուղղվելու է յուրաքանչյուր տարվա համար 2023 թվականի համար՝ 538739.0հազ. դրամ, 2024 թվականի համար՝509081.2 հազար դրամ և 2025 թվականի համար՝ 511854.8հազ. դրամ:

10. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը իրագործում է ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքում /ՀՀ Սահմանադրության 160-րդ հոդված, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կանոնադրության 1-ին կետ/:

Մարզում կառավարության իրականացված քաղաքականությունը ուղղված է մարզի սոցիալ-տնտեսական համընդհանուր զարգացմանը, արդյունաբերության և գյուղատնտեսության արդիական ճյուղերի զարգացմանը, ենթակառուցվածքների զարգացմանը և ընդլայնմանը, կրթական, մշակութային և առողջապահական տարբեր ծրագրերի իրականացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության թվի կրճատմանը և վերջապես քաղաքացու, անհատի բարեկեցիկ կյանքի ապահովմանը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման N 3 հավելվածով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը:

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի զարգացման տեսլականն է՝ ունենալ կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսություն, զբաղվածության բարձր մակարդակ և ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ:

Տեսլականին հասնելու նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզի առկա իրավիճակի վերլուծության հիման վրա սահմանվել են հետևյալ ռազմավարական նպատակները.

1. Մինչև 2025թ. մարզի տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառման, աշխատատեղերի ստեղծման, աղքատության կրճատման միջոցով՝ մինչև 10%,
2. Մինչև 2025թ. մարզի թույլ զարգացած տարածքների անհամաչափությունների նվազեցում՝ 10%-ով,

3. Մարզային զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վայոց ձորի մարզի զարգացման երեք առաջնահերթ գերակայություններ են.

Զբոսաշրջության զարգացում՝ /էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ, պատմամշակութային տուրիզմ նաև տուրիզմի նոր ձևեր լեռնագնացություն, հեծանվորդություն, էքստրեմալ տուրիզմ, առողջապահական տուրիզմ, կրոնական, գինու/: Խթանել գյուղական բնակավայրերում տուրիզմի զարգացմանը՝ գյուղական տուրիզմ:

Վերամշակող արդյունաբերության զարգացում՝ Վայոց ձորի մարզում իրատեսական է վերամշակող արդյունաբերության զարգացումը, քանի որ առկա է անհրաժեշտ աշխատուժ և հումք/գյուղմթերք,բնական պաշարներ/: Այն կնպաստի զբաղվածության ընդլայնմանը, քաղաքների զարգացմանը, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ ձեռնարկությունների թվաքանակի աճին, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացմանը:

Գյուղատնտեսության մեքենայացում, արդիականացում՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, օրգանիկ գյուղմթերքի արտադրություն, գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի խթանում՝ Վայոց ձորի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Սակայն ավանդական գյուղատնտեսությունը իր զարգացման հնացած մոդելով ի վիճակի չէ ապահովել համաչափ և մրցունակ զարգացում, ուստի անհրաժեշտ է խթանել նոր տեխնոլոգիաների, նոր տեխնիկայի օգտագործման հնարավորություններ: Մեծ ծավալ ունեն չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը: Հողերի որակի բարձացման համար անհրաժեշտ է կատարել հողերի մելիորացիա: Շեշտը պետք է դրվի օրգանիկ գյուղմթերքի արտադրություն, ցանքային տարածությունների, պտղի և հատապտղի տնկարկների ավելացման և ինտենսիվ մշակությամբ այգիների հիմնման վրա:

1. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ոլորտային քաղաքականության թիրախների ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից իրականցվող ընդհանուր ծախսերը հայտերով ներկայացված են ՝բացված ըստ հիմնական ծրագրերի և ուղղությունների: